*Benjamin, W. (1996). The Task of the Translator: An introduction to the translation of Baudelaire's Tableaux Pavisiens (H. Zohn, Trans.).*

*Yessayan, Z. (2014). My Soul in Exile and other writings (B. Merguerian, Ed.). Boston, Massachusetts: AIWA Press.*

*Yessayan, Z. (2014). The Graden of Silihdar (J. Manoukian, Trans.). Boston, Massachusetts: AIWA Press.*

*Venuti, L. (1995). The Translator's Invisibility: A History of Translation. New York: Routledge.*

*Venuti, L. (2004). How to Read a Translation. Words Without Borders. Retrieved from <http://www.wordswithoutborders.org/article/how-to-read-a-translation>*

*Kurghinian, S. (2005). I Want to Live: Poems of Shushanik Kurghinian (S. Avagyan, Trans.; S. Barba & V. Rowe, Eds.). Watertown, Mass.: AIWA Press.*

*S. Weir Mitchell, 1901 "Nervousness and its influence on treatment," from Doctor and Patient, Philadelphia, Lippincott*

*S. Weir Mitchell, 1901 "The Evolution of the Rest Treatment," from Doctor and Patient, Philadelphia, Lippincott*

*Catford, J.C., 1965. A Linguistic Theory of Translation, London, Oxford University Press.*

*Gentzler, E., 1993 Contemporary Translation Theories, London and New York.*

*Schulte, R. and J. Biguenet, 1992. Theories of Translation, An Anthology of Essay from Dryden to Derrida, Chicago and London, University of Chicago Press.*

*Gilman, C. P. (1998). The Yellow Wallpaper (Bedford cultural editions ed.) (D. M. Bauer, Ed.). Bedford/St. Martin's .*

*Barthes, R. (1967). The Death of the Author (R. Howard, Trans.)*

*Said, E. W. (1978). Orientalism. New York: Pantheon Books.*

*Flotow, L. V. (1997). Translation and gender: translating in the "era of feminism". St. Jerome.*

*Sontag, S. (1997). Being Translated. RES: Anthropology and Aesthetics, (32), 13-18.*

*Retrieved from <http://www.jstor.org/stable/20166978>*

*Berman, A. 1992. The Experience of the Foreign: Culture and Translation in Romantic Germany. Albany: State University of New York Press.*

*Schleiermacher, F. 1992. "On the Different Methods of Translating", in André Lefevre (ed.),*

*Translation/History/Culture. London. New York: Routledge.*

*Berman, A. 2000. "Translation and the Trials of the Foreign", in: Lawrence Venuti (ed.), The*

*Translation Studies Reader. London: Routledge. 284–297.*

## Appendices

### ԴԵՂԻՆ ՊԱՍՏԱՌԸ

#### Շառլոթ Պերկինս Գիլման

Շատ հազվադեպ է պատահում, որ իմ ու Ջոնի պես հասարակ մարդիկ ամռան համար ժառանգական կալվածք վարձակալեն:

Գաղութատիրական ժամանակաշրջանի մի առանձնատուն, ժառանգական կալվածք, ուրվականներով տուն, ես կասեի և կհասնեի ռոմանտիկ երանության բարձունքին, բայց կյանքից այդքանն ուզելը չափից շատ կլիներ:

Միևնույն է, կարող եմ հպարտորեն հայտարարել, որ այս տան հետ ինչ-որ բան այն չէ:

Հակառակ դեպքում ինչո՞ւ է այսքան էժան: Ինչո՞ւ է այսքան երկար ժամանակ չբնակեցված մնացել:

Ջոնն, իհարկե, ծիծաղում է վրաս, բայց դա սպասելի է ամուսնության մեջ:

Ջոնը ծայրահեղ աստիճանի պրակտիկ մարդ է: Հավատքի և սնահավատության ուժգին սարսափի հանդեպ չունի որևէ համբերություն, և բացեիբաց ծաղրում է ոչ զգացական, անտեսանելի և անբացատրելի բաների մասին խոսակցությունները:

Ջոնը բժիշկ է, և *գուցե* (ոչ մի կենդանի հոգու, իհարկե, չէի պատմի սրա մասին, բայց սա մեռած թուղթ է, ու այն խաղաղություն է բերում մտքիս), *գուցե* այս պատճառով է, որ ես ավելի արագ չեմ ապաքինվում:

Նա ուղղակի չի հավատում, որ ես հիվանդ եմ:

Եվ ի՞նչ կարող ես անել:

Ի՞նչ անել, եթե բոլորի կողմից հարգված բժիշկը՝ սեփական ամուսինը, հավաստիացնում է ընկերներին և բարեկամներին, որ քեզ մոտ բացի ժամանակավոր նյարդային դեպրեսիայից (թեթև հիստերիայի հակում) իրականում ոչ մի լուրջ բան չկա: Եղբայրս նույնպես բժիշկ է, և նույնպես՝ հարգված, ու նա էլ է նույն բանն ասում:

Այսպիսով ես ընդունում եմ ինչ-որ ֆոսֆատներ կամ ֆոսֆիտներ, ինչևէ, հետո տոնիկներ ու ճամփորդություններ ու մաքուր օդ ու ֆիզիկական վարժություններ, ու մինչ ասպարհնումն ինձ բացարձակապես արգելված է «աշխատել»:

Անձամբ ես համաձայն չեմ նրանց հետ:

Ես համոզված եմ, որ հաճելի աշխատանքն՝ իր ոգևորությամբ ու փոփոխություններով, ինձ օգտակար կլիներ:

Բայց ի՞նչ կարող ես անել:

Չնայած այդ երկուսին՝ մի որոշ ժամանակ գրեցի, բայց ինձ իրոք հյուծում է այդ ամենը. Այն, որ ստիպված եմ միշտ խորամանկել, հակառակ դեպքում՝ առերեսվել ճնշող դիմադրության:

Ես երբեմն պատկերացնում եմ ինչ կլիներ իմ վիճակը, եթե ավելի քիչ դիմադրության առերեսվեի ու ավելի մոտ լինեի հասարակությանն ու ոգևորող երևույթներին: Բայց Չոնը ասում է, որ ամենավատ բանը, որ կարող եմ հիմա անել, իմ դրության մասին մտածելն է: Եվ անկեղծ ասած, ես ինձ միշտ վատ եմ զգում դրանից:

Եվ այդ իսկ պատճառով դա մի կողմ կդնեմ և կխոսեմ տան մասին:

Ամենագեղեցիկ վայրն է. մեկուսացած, կանգնած ճանապարհից բավականին ետ, գյուղից էլ՝ մոտ երեք մղոն հեռու: Այս տունը իր պատերով, ցանկապատերով և կողավող դարպասներով, ինչպես նաև այգեպանների և ուրիշ մարդկանց համար առանձին

կառուցված տնակներով, ինձ ստիպում է հիշել այն անգլիական տները, որոնց մասին հաճախ կարդացել եմ:

Մի արտակարգ այգի էլ ունի: Երբեք այսպիսի այգի չէի տեսել՝ ընդարձակ ու սովորոտ, լի կանաչ ցանկապատերով գծված արահետներով և ողկույզներով ծածկված մի շարք պերգոլաներով ու նստարաններով:

Ջերմոցներ էլ կային, բայց բոլորը ջարդրտված են հիմա:

Կարծես թե ինչ-որ իրավական խնդիր է եղել, ինչ-որ բան ժառանգների հետ կապված: Համենայն դեպս, այս տունը տարիներ շարունակ դատարկ է եղել:

Այս վայրը արթնացնում է ուրվականների մասին մտքերս, սա վախով եմ նշում, և, միևնույն է, ինչ որ տարօրինակ բան կա այս տան մեջ, ես դա զգում եմ:

Մի լուսնոտ երեկո ես նույնիսկ Ջոնին եմ ասել սրա մասին, բայց նա ասաց, որ այն, ինչ ես զգում եմ, ընդամենը վազվզող միջանցիկ քամին է: Ասաց ու փակեց պատուհանը:

Երբեմն անտեղի բարկանում եմ Ջոնի վրա: Վստահ եմ, որ երբեք այսքան զգայուն չեմ եղել: Կարծում եմ՝ այս նյարդային վիճակի պատճառով է:

Բայց Ջոնը հաստատում է՝ այդպես զգալուց ես կմոռանամ ինքնատիրապետման մասին, ես էլ հսկայական ջանք եմ գործադրում գոնե նրա մոտ ինձ տիրապետելու համար, և դրանից սաստիկ հոգնում եմ:

Բնավ չեմ հավանում մեր սենյակը: Ես ներքևի հարկինն էի ուզում: Այն, որ բացվում էր վերանդայի վրա, որի պատուհանները վարդածածկ էին ու որտեղ հնաժող կարված չթե գեղեցիկ վարագույրներ կային: Բայց Ջոնը ոչինչ չէր ուզում լսել այդ մասին:

Նա ասաց, որ այնտեղ ընդամենը մի պատուհան կար և երկու անկողին չէր տեղավորվի, իսկ մոտ գտնվող ուրիշ սենյակ էլ չկար, որ իր համար վերցներ:

Ջոնը շատ սիրով է իմ հանդեպ և ուշադիր, ու հազվադեպ է թույլ տալիս՝ առանց իր ուղղորդման ինչ որ բան անեմ:

Օրվաս ամեն ժամը պլանավորված է: Նա չափից շատ է հոգ տանում իմ մասին, իսկ ես անշնորհակալ եմ զգում, որ չեմ կարողանում ավելի շատ գնահատել այս ամենը:

Ջոնն ասաց, որ այստեղ ենք եկել միմիայն ինձ համար. որ մի լավ հանգստանամ ու ինչքան հնարավոր է մաքուր օդ շնչեմ:

- Մարզվելը կախված է նրանից, թե ինչքան ուժեղ քեզ կզգաս, սիրելիս, - ասաց, - իսկ ուտելը՝ ախորժակիցդ: Բայց օդը դու անկախ ամեն ինչից անընդհատ շնչելու ես:

Հենց այս պատճառով էլ մենք վերցրինք տան ամենավերևի հարկում գտնվող մանկասենյակը:

Այն մի մեծ, ընդարձակ սենյակ է, գրեթե ամբողջ հարկով ամեն կողմ ձգվող պատուհաններով, որոնցից առատ լույս ու մաքուր օդ է լցվում սենյակը: Ըստ իս, սենյակը սկզբում մանկասենյակ է եղել, հետո վերածվել է խաղասենյակի և մարզասենյակի, քանի որ պատուհանները երեխաների համար ճաղապատել են, իսկ պատերից օղակներ և այլ բաներ են կախված:

Պատերի ներկն ու պաստառը այնպիսի տեսք ունեն ասես տղաների դպրոցն էր օգտագործել: Մահճակալիս գլխավերևում այնքան վերև որքան ձեռքս կհասնի, երկար կտորներով թուղթը պոկոտված է, և մի մեծ հատված էլ՝ սենյակի մյուս կողմում: Ես ավելի վատ վիճակում գտնվող թուղթ դեռ չէի տեսել:

Այդ տարածվող նախշերից մեկը գործում է գեղանկարչական բոլոր հնարավոր մեղքերը:

Այն բավականին ձանձրալին է, որ նայողին շփոթեցնի, անընդհատ նյարդայնացնելու և ուսումնասիրել պահանջելու աստիճան արտահայտված է, և երբ որոշակի

հեռավորությունից հետևում ես անկանոն, անորոշ կորություններին, նրանք հանկարծակի ինքնասպանություն են գործում. կատաղի անկյան տակ սուզվում են և չսված հակասությամբ ոչնչանում:

Պաստառը տհաճ գույն ունի, գրեթե զգվելի. ծխացող կեղտոտ դեղին գույն, որը արտասովոր կերպով խամրում է դանդաղ իջնող արևի լույսի տակ:

Այն խամրած է, բայց տեղ-տեղ վառ նարնջագույն է և որոշ հատվածներում էլ՝ տհաճ կանաչադեղնավուն երանգ ունի:

Չարմանալի չէ, որ երեխաներն ատել են այն: Ես ինքս կսկսեի ատել, եթե ստիպված լինեի երկար ապրել այս սենյակում:

Ահա, Ջոնը գալիս է, պետք է սա մի կողմ դնեմ. Նա ասում է իմ նույնիսկ մեկ բառ գրելը:

Մենք արդեն երկու շաբաթ է այստեղ ենք, և առաջին օրվանից ի վեր գրելու ցանկություն չեմ ունեցել:

Հիմա նստած եմ պատուհանի մոտ՝ այս սոսկալիմանկասենյակում, և ոչինչ չի խանգարում իմ գրելուն, իհարկե չհաշված ուժի պակասը:

Ջոնը ամբողջ օրը տանը չէ, և երբեմն նույնիսկ գիշերները, երբ լուրջ դեպք է պատահում:

Ուրախ եմ, որ իմ դեպքը լրջերից չէ:

Բայց այս նյարդային խնդիրներն ահավոր ընկճող են:

Ջոնը չգիտի, թե իրականում ես որքան եմ տանջվում: Նա գիտի, որ տանջվելու պատճառ չկա, և դա նրա համար բավական է:

Սա իհարկե ընդամենը նյարդայնություն է: Բայց մտահոգում է այն աստիճան, որ ոչ մի կերպ չեմ կարողանում պարտականություններս կատարել:

Ուզում էի մի այնպիսի օգնող ուժ լինել Ջոնի համար, այնպիսի իրական հանգստություն ու սփոփանք, և ահա ես՝ արդեն բեռ դարձած: Ոչ որ չի հավատա, թե որքան ջանք եմ գործադրում անելու այն չնչինը, որին այժմ ունակ եմ՝ հագնվել ու զվարճացնել, և ամեն ինչ կարգի բերել:

Բախտս բերել է՝ Մարին այդքան լավ է վերաբերվում բալիկին: Ինչ քնքուշ բալիկ: Բայց չեմ կարող նրա հետ լինել, դա ինձ այնքա՛ն է նյարդայնացնում:

Կարծում եմ Ջոնը իր կյանքում երբեք չի նյարդայնացել: Եվ նա այնպես է ծիծաղում վրաս այս պաստառի համար:

Սկզբում պաստառը փոխելու մտադրություն ուներ, բայց հետո ասաց, որ ես ներշնչում եմ ինձ, ու նյարդային հիվանդի համար չկա ավելի վատ բան քան երևակայությանը գոռ տալը:

Ասաց, որ պաստառը փոխելուց հետո, հերթը կհասներ ծանր մահճակալին, հետո ճաղապատ պատուհաններին, ու հետո հարկի աստիճանների վերևում գտնվող դարպասին, և այդպես շարունակ:

-Դու գիտես, որ այս տեղը լավ է ազդում քեզ վրա, - ասաց, - և, իրո՛ք, սիրելիս, իմաստ չունի երեք ամսվա վարձակալության համար տուն վերանորոգել:

-Ուրեմն արի իջնենք մի հարկ ցած, - ասացի, - այնտեղ այնպիսի՛ գեղեցիկ սենյակներ կան:

Հետո նա ինձ իր գիրկն առավ թռչնիկ անվանելով ու ասաց, որ կիջնի նկուղ, և այն ներկել կտա՝ մտցնելով այն մեր վարձակալության պայմանագրի մեջ:



Բայց Ջոնը ճիշտ է ասում անկողնու, պատուհանների ու մնացած բաների առումով:

Սա հարմարավետ ու ընդարձակ սենյակ է, հենց այն ինչ պետք է, ու ես իհարկե հիմար կգտնվեմ, եթե նրան այդքան նեղություն տամ իմ քմահաճույքի համար:

Ես իրոք սկսում եմ հավանել այս մեծ սենյակն ու ամեն ինչ, բացի այս անտանելի պաստառից:

Պատուհաններից մեկից տեսնում եմ այգին, այն խորհրդավոր ստվերոտ զրուցարանները, ըմբոստ հնաոճ ծաղիկները, թփուտներն ու գորշ ծառերը:

Իսկ մյուսից ես զմայլվում եմ դեպի ծոցը բացվող հիանալի տեսարանով ու մասնավոր նավակայանով, որ պատկանում է կալվածքին: Տան մոտից իջնող գեղեցիկ ստվերոտ ուղին էլ է երևում: Ես հաճախ պատկերացնում եմ իբր մարդիկ են քայլում այս բազմաթիվ արահետներով, բայց Ջոնը զգուշացնում է, որ շատ չտրվեմ երևակայությանս: Ասում է, որ իմ երևակայության ձիրքն ու պատմություն հորինելու սովորությունը նյարդային թուլությանս հետ մեկտեղ կարող են հեշտությամբ հանգեցնել տարբեր մտապատկերների: Եվ որ ես պետք է օգտագործեմ իմ կամքն ու առողջ դատողությունը նման միտումները կանգնեցնելու համար: Ու ես փորձում եմ:

Կարծում եմ, որ եթե լավ զգայի, մի փոքր գրելը կթուլացներ լարված մտքերս ու կհանգստացներ ինձ:

Բայց զգացել եմ, որ երբ փորձում եմ գրել, ուժասպառ եմ լինում:

Այնքան վիատեցնող է, որ աշխատանքիս մասին խորհուրդ տվող ու ընկերակցող մեկը չկա: Ջոնն ասում է, որ երբ ես իրոք ինձ լավ զգամ, զարմիկ չենրին ու Ջուլիան երկար ժամանակով հյուր կգան մեզ: Բայց ասում է, որ ավելի շուտ հրավառ նյութեր կդնի բարձիս տակ, քան հիմա այդ աշխուժ մարդկանց ինձ մոտ կթողնի:

Երանի թե արագ ապաքինվեմ:

Բայց պետք չէ՝ մտածել դրա մասին: Իսկ այս պաստառը այնպես է վրաս նայում, ասես գիտի իր հրեշավոր ազդեցության մասին:

Պարբերաբար կրկնվող կետում նախշը կախվում է ջարդված պարանոցի պես, ու երկու խոշոր աչք շրջված վրաս են պլշում:

Բարկանում եմ դրանց հանդգնության ու մշտական ներկայության վրա: Վերևից ներքև ու դեպի կողք են սողում... և այդ անհեթեթ, անթարթ աչքերն ամենուր են: Մի տեղ կա, որտեղ եզրերը չեն համապատասխանեցվել, ու աչքերից մեկը մյուսից մի փոքր ավելի բարձր է ամբողջ գծով:

Երբեք չեմ տեսել անկենդան բանն այսքա՛ն արտահայտիչ լինի (բոլորս էլ գիտենք, թե որքա՛ն արտահայտիչ են անշունչ բաները): Փոքր ժամանակ արթուն պառկած՝ դատարկ պատերից ու պարզ կահույքից ավելի շատ զվարճանք ու տագնապ էի ստանում, քան երեխաների մեծամասնությունը՝ խաղալիքի խանութից:

Հիշում եմ՝ ինչպես էին մեր տան հին մեծ գրասեղանի գլխիկները ինձ մտերմաբար աչքով անում, ու մի աթոռ էլ կարծես միշտ իմ ուժեղ ընկերը լիներ:

Չգում էի, որ եթե մյուս իրերը սկսեն չափից դուրս վախենալու դառնալ, ես միշտ կարող էի ցատկել այդ աթոռի վրա ու ապահով լինել:

Իսկ այս սենյակի կահույքն ավելի քան աններդաշնակ է, քանի որ ստիպված էինք այս ամենը ներքևի հարկից բերել այստեղ: Մտածում եմ, երբ այս սենյակը որպես խաղասենյակ են օգտագործել, մանկանոցի համար նախատեսված ամեն բան ստիպված դուրս են տարել: Եվ դա զարմանալի չէ՝ Այսպիսի քարուքանդ արված սենյակ երբևէ չեմ տեսել:

Ինչպես արդեն գրել եմ, պաստառը որոշ հատվածներում պատառոտված է, և ավելի ամուր է պատին կպած քան հարազատ եղբայրը. նրանք հավանաբար համառությամբ ու ասելությանբ լցված են դա արել:

Հատակը քերծոտված, փորփրված, ու ճեղքոտված է: Սվաղն էլ այստեղ-այնտեղ քանդված է, իսկ այս հսկա ծանր մահճակալը (միակ բանը, որ գտանք սենյակում, երբ դեռ նոր էինք եկել) կարծես պատերազմների միջով է անցել:

Բայց ես բոլորովին դեմ չեմ այդ ամենին, միայն՝ պաստառին:

Ահա Ջոնի քույրն է գալիս: Այնպիսի՝ հրաշալի աղջիկ է, ու այնպե՛ս է իմ մասին հոգ տանում: Չպետք է թույլ տամ, որ գտնի ինձ գրելիս:

Նա եռանդուն տնային տնտեսուհի է և ուրիշ մասնագիտության չի էլ ձգտում: Ես վստահ եմ, որ նրա կարծիքով գրելն է իմ հիվանդության պատճառը:

Բայց ես գրում եմ, երբ նա այստեղ չէ, ու այս պատուհաններից նրան հեռվից տեսնում եմ:

Պատուհաններից մեկը նայում է ուղիղ ճանապարհին՝ հանելի, ստվերախիտ ու քամոտ ճանապարհ է, իսկ մյուսը բացվում է գյուղի վրա: Այս գեղեցիկ գյուղի, որ հսկա թեղիներով ու թավշե մարգագետիններով է լցված:

Այս պաստառն ուրիշ երանգի ենթանախշ էլ ունի, որը հատկապես վրդովեցնող է, որովհետև միայն հատուկ լույսի տակ կարող ես տեսնել, իսկ մնացած ժամանակ հստակ չի երևում:

Բայց այն հատվածներում որտեղ խամրած չէ, ու արևը ճիշտ տեղում է, մի տարօրինակ, սադրող ու տձև կերպարանք եմ տեսնում, որը կարծես թաքնվում է այդ հիմար ու տեսանելի նախշի ետևում:

Քույրն է բարձրանում աստիճաններով...

Հուլիսի 4-ն անցավ: Բոլորը գնացին, ու ես շատ հոգնած եմ: Ջոնը մտածեց, որ մի փոքր ընկերակցությունն ինձ վրա լավ կազդի, ու դրա համար մենք մի շաբաթով հյուրընկալեցինք մայրիկին, Նելլիին ու երեխաներին:

Իհարկե ես բան չարեցի: Հիմա ամեն ինչ Ջեննին է անում:

Բայց միևնույն է՝ հոգնեցի:

Ջոնն ասում է, որ եթե ավելի արագ չապաքինվեմ ինձ Վիլըր Միտչելի մոտ կուղարկի աշնանը:

Բայց ես բացարձակապես չեմ ուզում այնտեղ գնալ: Ընկերներիցս մեկը նրա ձեռքն էր ընկել ու ինձ պատմեց, որ նա իմ եղբոր ու Ջոնի պես է, ուղղակի ավելին:

Ու բացի դրանից, այդքան հեռու տեղ գնալը մեծ նախաձեռնություն է:

Չեմ ուզում ջանք գործադրել որևէ բանի համար, ու դրանից ավելի դժկամ ու դժուրագրգիռ եմ դառնում:

Ամբողջ ժամանակ լաց եմ լինում... հիմնականում առանց պատճառի:

Իհարկե, ոչ այն ժամանակ, երբ Ջոնը կամ ուրիշ մեկն այստեղ է. Միայն երբ մենակ եմ:

Ու հիմա ես հաճախ եմ մենակ լինում: Ջոնը հաճախ քաղաքում է մնում, հրատապ դեպքերի բերումով, իսկ Ջեննին շատ լավն է, ու երբ պետք է, ինձ մենակ է թողնում:

Մի փոքր այգում եմ զրոսնում կամ այն հանելի ուղիով, նստում եմ վարդերի տակ գտնվող նստարանին, բայց մեծամասամբ այստեղ եմ պառկած:

Չնայած այս պաստառի, ես իրոք սկսում եմ հավանել այս սենյակը... ու երևի հենց այս պաստառի պատճառով:

Այն իմ մտքում կենդանություն է առնում:

Պատկում եմ այս հսկա անշարժ մահճակալին (այն իմ կարծիքով տեղում գամված է) ու սկսում եմ ժամերով հետևել այդ նախշին: Ու ես հավաստիացնում եմ, որ այս զբաղմունքը հավասար է մարմնամարզության անելուն: Ես սկսում եմ ամենաներքևից, անկյունի այն հատվածից, որտեղ պաստառը վնասված չէ, ու հազարերորդ անգամ որոշում, որ այս անգամ հետևելու եմ այդ անիմաստ նախշին այնքան ժամանակ, մինչև որ չհանգեմ մի որևէ վերջնակետի:

Ես մի փոքր հասկանում եմ դիզայնի սկզբունքներից, ու զիտեմ, որ սա ո՛չ ճառագայթման, ո՛չ փոխհաջորդության, ո՛չ կրկնության, ո՛չ համաչափության, ու ո՛չ էլ իմ լսած որևէ այլ սկզբունքով է համադրված:

Լայնությամբ, իհարկե, կրկնվում է, բայց ոչ այլ կերպ:

Մի կողմից նայելիս յուրաքանչյուր լայնություն առանձին է կանգնած, փքված կորություններն ու գալարները՝ մի տեսակ տենդահար «այլասերված Հոմերական ոճով», վեր ու վար են ճոճվում ապշության մեկուսացած սյուներով:

Բայց մյուս կողմից էլ, դրանք զուգահեռաբար միանում են իրար, ու վայրիվերո ուրվագծերը ջրիմուռների պես թեքությամբ տարածվում են ու ստեղծում այս տեսողական աղետը:

Այս ամբողջը նաև հորիզոնական է ձգվում, զոնե այդպես թվում է, ու ես այդ ուղղությամբ գնացող հերթականությունը որոշելու փորձերից ուժասպառ եմ լինում:

Իսկ Եզրագարդի համար օգտագործվել է հորիզոնական լայնությունը, և դա էլ ավելի է խճճում ամեն ինչ:

Մենյակի մի ծայրում որտեղ պաստառին ձեռք չեն տվել, ու երբ խաչվող լույսերը մարում են ու ցածր արևի շողերը լուսավորում են այդ հաստվածը, ես կարծես թե այնուամենայնիվ տեսնում եմ ճառագայթումը:

Անվերջանալի հրեշակերպությունները թվում է գալիս հավաքվում են մի ընդհանուր կենտրոնի շուրջ ու շեղված տագնապով սուզվում:

Հոգնում եմ դրանց հետևելուց: Երևի մի քիչ քնեմ:

Չգիտեմ՝ ինչու պետք է գրեմ սա:

Չեմ ուզում:

Ինձ անկարող եմ զգում...

Ու գիտեմ, որ Ջոնը սա անհեթեթ բան կհամարեր: Բայց ես ինչ-որ կերպ պետք է ասեմ այն, ինչ զգում ու մտածում եմ. դա այնպիսի՝ թեթևություն է բերում:

Բայց ջանքն ավելի շատ է, քան թեթևացումը:

Օրվա կեսն անտանելի ծույլ եմ, ու շատ եմ պառկած մնում:

Ջոնն ասում է, որ ուժերս պետք է պահպանեմ, ու ստիպում է ձկան յուղ, շատ տարբեր տոնիկներ և ուրիշ բաներ խմել, էլ չասած գարեջրի, զինու և հում մսի մասին:

Ա՛խ, սիրելի Ջոն: Նա շատ է ինձ սիրում ու ասում է, որ հիվանդ եմ: Այն օրը փորձեցի հետն անկեղծ, ողջամտորեն զրուցել ու ասել, թե ինչքան կուզենայի, որ թույլ տար զարմիկ Հենրիին ու Ջուլիային այցելելի:

Բայց ասաց, որ ես ի վիճակի չեմ այնտեղ գնալ ու այնտեղ հասնելուց հետո էլ տանել չեմ կարողանա այդ ամենը: Ու ես չկարողացա նրան համոզելի, քանի որ դեռ խոսքս չավարտած արդեն լաց էի լինում:

Ուղիղ մտածելն ինձանից գնալով ավելի է մեծ ջանք է պահանջում: Ենթադրում եմ՝ այս նյարդային թուլությունից է:

Ու սիրելի Ջոնն ինձ իր ձեռքերի մեջ առավ, աստիճաններով բարձրացրեց ու պառկեցրեց անկողնուն, հետո նստեց կողքս ու սկսեց կարդալ ինձ համար, այնքան մինչև գլուխս հոգնեց:

Ասաց, որ իր սիրելին եմ, իր սփոփանքը, ու այն ամենն, ինչ ունի, ու որ հանուն իրեն պետք է իմ մասին հոգ տանեմ ու ինձ լավ նայեմ:

Ասում է, որ միայն ես կարող եմ ինձ դուրս բերել այս վիճակից, որ պետք է կամքիս ուժն ու ինքնակառավարումս օգտագործեմ ու չթողնեմ, որ հիմար երևակայություններն ինձ տանեն:

Միակ սփոփանքս այն է, որ երեխան առողջ է ու երջանիկ: Ու ստիպված չէ այս մանկասենյակում, այս սոսկալի պաստառի հետ մնալ:

Եթե մենք չզբաղեցնեինք սենյակը, ապա այդ հրաշք փոքրիկն էր զբաղեցնելու այն: Ինչպիսի՛ բախտավոր փախուստ: Իմ երեխային, այդ զգայուն փոքրիկ արարածին, ոչ մի դեպքում թույլ չէի տա այսպիսի մի սենյակում ապրել:

Չէի մտածել այդ մասին, բայց լավ եղավ, որ Ջոնն ինձ այստեղ պահեց: Բանը նրանում է, որ ես, ի տարբերություն երեխայի, ավելի հեշտությամբ կարող եմ սրան դիմանալ:

Իհարկե ես այնքան խելամիտ եմ, որ սրա մասին այլևս չեմ խոսում նրանց հետ, բայց միևնույն է շարունակում եմ հետևել:

Այս պաստառում կան այնպիսի բաներ, որոնց մասին միայն ես գիտեմ ու երբևէ կհիմանամ:

Օր օրի նախշի ետևի կերպարանքներն ավելի հստակ են դառնում:

Միշտ նույն կերպարանքն է, ուղղակի կրկնվում է:

Այն նման է նախշի ետևում կռացող ու սողացող կնոջ: Այն ինձ ընդհանրապես դուր չի գալիս: Ուզում եմ իմանալ... սկսում եմ մտածել... երանի Ջոնն ինձ տաներ այստեղից:

Այնքան դժվար է Ջոնի հետ իմ դեպքի մասին խոսելն, ախր նա այնքան խելացի է ու այնքան է ինձ սիրում:

Բայց անցած գիշեր ես փորձեցի դա անել:

Լուսնկա գիշեր էր: Լուսինը արևի պես լուսավորում է ամենուրեք:

Երբեմն ասում եմ այն. այնքան դանդաղ է սողում, ու միշտ կամ մի պատուհանից է ներս մտնում կամ մյուսից:

Ջոնը քնած էր ու չէի ուզում նրան արթնացնել, և ուրեմն անշարժ պառկեցի ու սկսեցի նայել, թե ինչպես է լուսնի լույսն ընկնում այդ ալիքաշարժ պաստառի վրա, այնքան մինչև վախը սողոսկեց ներսս:

Աղոտ կերպարանքը կարծես ցնցում էր նախշը, փորձելով դրանից դուրս պրծնել:

Ես զգուշորեն վեր կացա ու մոտեցա՝ տեսնեմ իրոք պաստառը շարժվում էր, թե ոչ, ու երբ ետ եկա Ջոնն արթնացել էր:

-Ի՞նչ է պատահել, աղջիկս, - ասաց, - կառռես, այդպես մի՛ քայլիր:

Ինձ այդ պահը շատ հարմար թվաց խոսելու համար: Ես նրան ասացի, որ այստեղ չեմ ապաքինվում ու կուզենայի, որ այստեղից ինձ տաներ:



-Բայց սիրելիս, - ասաց նա, - մեր վարձակալության ժամկետը երեք շաբաթից կլրանա, ու ավելի շուտ այստեղից գնալու պատճառ չեմ տեսնում: Տան վերանորոգումը դեռ չեն ավարտել, ու քաղաքից էլ հիմա դուրս գալ չեմ կարող: Իհարկե, եթե այստեղ քեզ ինչ-որ վտանգ սպառնար, ես դա կանեի, բայց սիրելիս, դու իրոք քեզ ավելի լավ ես զգում այստեղ, անկախ նրանից դու դա նկատում ես, թե ոչ: Ես բժիշկ եմ, սիրելիս, ու գիտեմ: Գույնդ տեղն է եկել, քաշ ես հավաքել ու ախորժակդ լավացել է. ես հիմա քո համար ավելի հանգիստ եմ զգում:

-Ես ոչ մի գրամ էլ չեմ ավելացրել, - ասացի, - ախորժակս էլ հնարավոր է, որ ավելի լավ է, բայց միայն երեկոյան, երբ դու այստեղ ես լինում, իսկ առավոտյան, երբ զնում ես՝ ավելի վատանում է:

- Ախ այդ փոքրիկ սրտիկով աղջնակը, - մեծ գրկի մեջ առնելով ասաց նա, - կարող է հիվանդ լինել, որքան սիրտը ուզի: Իսկ հիմա արի այս հրաշք ժամերը քնելու վրա ծախսենք, ու սրա մասին առավոտյան խոսենք:

- Ու դու ոչ մի տեղ չե՞ս գնա, - մռայլորեն հարցրի:

-Օօօ՞, ինչպե՞ս կարող եմ, սիրելի՛ս: Ընդամենը երեք շաբաթ մնաց ու մինչ Ջեննին տունը կարգի կրերի մենք մի քանի օրով կգնանք մի փոքրիկ ուղևորության: Իրոք սիրելիս դու հիմա ավելի լավ ես:

-Ֆիզիկապես գուցե, - սկսեցի ու միանգամից կանգ առա: Նա ուղիղ նստել ու խիստ հայացքով վրաս էր նայում այնպես, որ ուրիշ ոչ մի բառ չկարողացա արտաբերել:

-Հոգի՛ս, - աղաչում եմ քեզ, հանուն ինձ ու մեր երեխայի ու նաև քեզ, երբեք էլ թույլ չտաս այդ միտքը գեթ մի վայրկյանով ուղեղդ մտնի: Զո խառնվածքի դեպքում ավելի վտանգավոր ու գայթակղիչ բան գոյություն չունի: Դա կե՛ղծ ու հիմա՛ր երևակայական բան է: Ինչպե՞ս կարող ես ինձ չվստահել, երբ որպես բժիշկ եմ դա քեզ ասում:

Ու իհարկե ես դրա մասի էլ ոչինչ չասացի, ու մենք շուտով քնեցինք: Նա կարծեց, թե ես առաջինը քնեցի, բայց չէի քնել, ու ժամերով այդպես պատկած փորձում էի հասկանել արդյոք այդ դիմացի ու ետևի նախշերը միասին, թե՞ առանձին են շարժվում:

Այս տեսակի նախշի վրա, ցերեկային լույսի ներքո, հերթականության պակաս կա, օրերնքի դեմ ընդվզում, ինչը նորմալ ուղեղի համար մշտական բորբոքիչ է:

Դրա գույնը բավականին գարշելի է, բավականին՝ անվստահելի ու զայրացնող, բայց նախշն ուղղակի տանջող է:

Թվում է, թե տիրապետել ես, բայց հենց այն պահին, երբ կարծես հետևում ես դրան, մի ակնթարթում գլուխկոնձի է տալիս, ու ահա և վե՛րջ: Մի լավ ապտակ է հասցնում, գետնին զցում ու սկսում ոտնահարել քեզ: Կարծես վատ երազ լինի:

Արտաքին նախշը ծաղկաձև արաբեսկ է, որ բորբոս է հիշեցնում: Եթե կարող եք, պատկերացրեք հողավոր գարշասունկ, սնկերի անվերջ ձգվող շարան, որ ծլում ու ծաղկում է անվերջ գալարներով: Ահա դրա պես մի բան է:

Այսինքն, երբեմն:

Այս պաստառն ունի մի նկատելի առանձնահատկություն, մի բան, որը ինձնից բացի ուրիշ ոչ ոք կարծես չի նկատել: Բանը նրանում է, որ այն լույսի հետ միասին փոփոխվում է:

Երբ արևի շողերը ներս են ընկնում արևելյան պատուհանից (ես միշտ հետևում եմ այդ առաջին երկար, ուղիղ շողին), նախշն այնքան արագ է փոփոխվում, որ հավատս չի գալիս:

Ահա թե ինչու եմ դրան անընդհատ հետևում:

Լուսնի լույսի տակ, (լույսն ամբողջ գիշեր մշտակա է, երբ կա լուսին) երբեք չէի մտածի, որ նույն պաստառն է:

Գիշերը ցանկացած տեսակի լույսի՝ լինի դա մթնշաղի, մոմի, լամպի և ամենավատը՝ լուսնի լույսի ներքո, այն ճաղերի է վերածվում: Արտաքին նախշի մասին եմ, ու հնարավորինս պարզ կարող ես տեսնել դրա ետևում գտնվող կնոջը:

Երկար ժամանակ չէի կարողանում հասկանալ, թե ետևում գտնվող այս աղոտ ենթանախշն ինչ էր: Բայց հիմա գրեթե վստահ եմ՝ դա կին է:

Ցերեկը նա ճնշված ու հանգիստ է: Կարծում եմ նրան հենց նախշն է այսքան անշարժ պահում: Այնքան շփոթեցնող է: Մի քանի ժամ հանգիստ եմ լինում:

Այնքան շատ եմ սկսել պառկած մնալ: Ջոնն ասում է, որ դա ինձ համար լավ է, Ու որ ինչքան հնարավոր է շատ քնեմ:

Իրոք որ հենց նա իմ այս սովորությունը սկսեց, երբ ամեն ուտելուց հետո ստիպում էր մի ժամ պառկել:

Համոզված եմ՝ շատ վատ սովորություն է . . . քանի որ, ինչպես տեսնում եք՝ չեմ քնում:

Ու դա նպաստում է խաբեությանը՝ ես նրանց չեմ ասում, որ արթուն եմ: Օ, ո՛չ:

Բանը նրանում է, որ ես սկսում եմ Ջոնից մի փոքր վախենալ:

Նա երբեմն շատ տարօրինակ է թվում, և նույնիսկ Ջեննիի հայացքն է անհասկանալի դարձել:

Երբեմ կայծակի պես հարվածում է այն միտքը, ուղղակի գիտական վարկածի պես, որ գուցե պաստառն է պատճառը:

Ես թաքուն հետևել եմ Ջոնին. նա հանկարծակի սենյակ կգար ինչ-որ անմեղ պատրվակով, ու մի քանի անգամ բռնացրել եմ պաստառին նայելիս: Ջեննին էլ: Մի անգամ նրան բռնեցի ձեռքը պաստառի վրա դրած:

Նա չգիտեր, որ սենյակում եմ, ու երբ հանգիստ, շատ հանգիստ ձայնով ու ամենագուսպ կերպով հարցրեցի, թե ինչ է անում պաստառի հետ, նա բռնված գողի պես շրջվեց ու, բավականին զայրացած էր, հարցրեց, թե ինչու եմ նրան այդպես վախեցնում:

Հետո ասաց, որ պաստառը գույն է տալիս, ու իմ ու Ջոնի բոլոր շորերի վրայից դեղին բծեր է գտել, ասաց՝ երանի ավելի ուշադիր լինեմք:

Պարզամիտ է հնչում, այնպես չէ՞: Բայց ես գիտեմ, որ նա այդ նախշն էր ուսումնասիրում, ու հաստատ որոշել եմ, որ ինձնից բացի ոչ ոք այն չի հայտնաբերելու:

Հիմա կյանքը շատ ավելի ոգևորիչ է, քան առաջ էր: Ակնկալելու, սպասելու ու հետևելու ավելի շատ բան ունեմ: Իրոք ավելի լավ եմ ուտում ու ավելի հանգիստ եմ:

Ջոնն այնքան ուրախ է իմ ապաքինման համար: Այն օրը ծիծաղեց ու ասաց, որ չնայած իմ այդ պաստառին ես կարծես ծաղկում եմ:

Ես ուղղակի ծիծաղեցի: Մտադրություն չունեի նրան պատմել, որ իրականում հենց պաստառի շնորհիվ է. կսկսեր ծաղրել ինձ: Նույնիսկ հնարավոր է ուզենար ինձ այստեղից տանել:

Չեմ ուզում գնալ այնքան ժամանակ մինչև ամեն ինչ չբացահայտեմ: Դեռ մի շաբաթ կա, և ինձ թվում է դա բավական կլինի:

Ես արդեն այնքան լավ եմ ինձ զգում: Ծիշտ է, գիշերները չեմ քնում՝ այնքան հետաքրքիր է զարգացմանը հետևելը, բայց ցերեկները բավականին շատ եմ քնում:

Ցերեկները հոգնեցնող ու շփոթեցնող են:

Անընդհատ նորանոր ծիլեր են դուրս գալիս բորբոսի վրա՝ դեղինի նոր երանգներով: Չնայած խղճամտորեն փորձում եմ՝ չեմ կարողանում հաշիվս պահել:

Այդ պաստառը ամենատարօրինակ դեղին գույնն ունի: Այն ինձ մտածել է տալիս կյանքումս տեսած բոլոր դեղին բաների մասին, բայց ոչ գեղեցիկ, ասենք՝ յուղածաղկի, այլ գարշելի, վատ դեղին բաների մասին:

Պաստառի հետ կապված մի ուրիշ բան էլ կա՝ հոտը: Հենց սենյակ մտա միանգամից դա նկատեցի, բայց արևի ու մաքուր օդի պայմաններում այն տանելի էր: Հիմա արդեն մի շաբաթ է մառախուղ ու անձրև է այստեղ, ու անկախ նրանից պատուհանները բաց են, թե փակ, այդ հոտն այստեղ է:

Այն սողոսկում է ամբողջ տնով մեկ:

Այն սավառնում է ճաշասենյակում, դարանակալում հյուրասենյակում, թաքնվում միջանցքում, և աստիճանների վրա փռված ինձ սպասում:

Այն ներծծվում է մազերիս մեջ:

Նույնիսկ, երբ դուրս եմ գալիս պտույտի, եթե գլուխս արագ շրջեմ ու դրան անակնկալի բերեմ՝ հոտն այդտեղ է:

Շատ առանձնահատուկ հոտ է: Ժամերով փորձել եմ վերլուծել ու հասկանալ, թե ինչ հոտի է նման:

Սկզբում այդքան էլ վատը չէ, և շատ նուրբ է, բայց բավականին աննկատ է, հանդիպածս հոտերից ամենամնայունը:

Այս խոնավ եղանակին այն ահավոր է: Գիշերներն արթնանում եմ ու զգում եմ գլխիս վերևում կախված այդ հոտը:

Սկզբում դա ինձ անհանգստացնում էր: Ես լուրջ մտածում էի տունը կրակի տալու մասին, ուղղակի որ հասնեմ այդ հոտին:

Բայց հիմա սովորել եմ դրան: Միակ բանը, որ կարող եմ հաստատ ասել այն է, որ այդ հոտը նման է պաստառի գույնին: Դեղին հոտ:

Մի շատ զվարճալի նշան կա պատի վրա, ամենաներքևում, ստորատախտակի երկայնքով: Սենյակի շուրջ պտտվող մի գիծ է: Բացի մահճակալից այն ձգվում է ամբողջ կահույքի ետևով՝ երկար, ուղիղ, նույնիսկ մրտաված, ասես անընդհատ տրորել է:

Հետաքրքիր է, ինչպե՞ս են սա արել, ո՞վ է արել, և ինչո՞ւ: Պտույտ ու պտույտ ու պտույտ . . . ու էլի ու էլի ու էլի . . . գլուխս դրանից սկսում է պտտվել:

Ես վերջապես մի բան հայտնաբերեցի:

Այդքան՝ երկար հետևելուց հետո գիշերները, երբ այն փոփոխվում է, ես վերջապես պարզեցի:

Առջևի նախշն իրո՞ք շարժվում է, ու դա զարմանալի չէ: Ետևից կինն է ցնցում:

Մեկ-մեկ ինձ թվում է, թե ետևում բազմաթիվ կանայք են, իսկ երբեմն՝ միայն մեկը, ու նա սողում է շատ արագ, ու դրանից էլ ամեն ինչ ցնցվում է:

Հետո ամենալուսավոր կետերում անշարժանում է, ու ամենամութ հատվածում բռնվում է ճաղերից ու ուժեղ ցնցում դրանք:

Ու ամբողջ ժամանակ նա փորձում է դուրս մագլցել: Բայց ոչ մեկը չի կարող այդ նախշի միջից դուրս պրծնել՝ այնպե՛ս է խեղդում: Կարծում եմ սա է պատճառը, որ այդքան շատ գլուխներ ունի:

Դրանք դուրս են պրծնում ու հետո նախշը միանգամից խեղդում է դրանց, ու շուռ տալիս այնպես, որ աչքերը սպիտակում են . . .

Եթե այդ գլուխները ծածկվեին կամ գոնե հեռացվեին, այդ աստիճան վատ չէր լինի:

Կարծում եմ այդ կինը ցերեկները դուրս է գալիս:

Ու կասեմ՝ ինչու, միայն ձեզ՝ գաղտնաբար, ես նրան տեսել եմ:

Ես կարող եմ նրան տեսնել իմ ամեն մի պատուհանից:

Դա նույն կինն է, ես գիտե՛մ, քանի որ միշտ սողո՛ւմ է, իսկ կանայք հիմնականում ցերեկով չե՛ն սողում:

Ես տեսնում եմ նրան ծառերի տակ, երկար ճանապարհի վրա սողալիս, ու երբ կառք է գալիս, նա թաքնվում է մորենու թփերի ետևում:

Ես չեմ մեղադրում նրան: Հաստատ նվաստացուցիչ է, երբ ցերեկով քեզ սողալիս են բռնում:

Ես միշտ դուռը կողպում եմ, երբ ցերեկով սողում եմ: Գիշերը չեմ կարող, քանի որ գիտեմ՝ Չոնը միանգամից ինչ-որ բաներ կկասկածի:

Ու Չոնը հիմա այնքան տարօրինակ է դարձել, որ չեմ ուզում նրան նյարդայնացնել: Երանի ուրիշ սենյակ տեղափոխվեր: Բացի այդ, չեմ ուզում, որ ինձնից բացի մեկ ուրիշն այդ կնոջն ազատի գիշերը:

Հաճախ մտածում եմ, հնարավո՞ր է արդյոք նրան բոլոր պատուհաններից միաժամանակ տեսնել:

Բայց որքան էլ արագ շրջվեմ, միայն հերթով եմ կարողանում տեսնել՝ մի պատուհանից մյուսը:

Ու չնայած միշտ տեսնում եմ նրան, նա ավելի արագ է կարողանում սողալ, քան ես հասցնում եմ շրջվել:

Երբեմն նրան հետևել եմ բաց բնության գրկում՝ քամուց քշվող ամպերի ստվերներից ավելի արագ սողալիս:

Այ, եթե կարելի լիներ ներքին նախշն ազատել վերինից: Այսինքն՝ քիչ-քիչ փորձել դա անել:

Մի ուրիշ ծիծաղելի բան էլ եմ հայտնաբերել, բայց այս անգամ չեմ ասելու՝ ինչ է: Այդքան էլ լավ չէ մարդկանց վստահելը:

Ընդամենը երկու օր մնաց, որ հասցնեմ այս պաստառը պոկել, ու ինձ թվում է Ջոնը գլխի է ընկնում: Հայացքը դուրս չի գալիս

Ու լսել եմ, թե ինչպես էր Ջեննիին իմ մասին մասնագիտական հարցերով ողողել: Ջեննին գեկուցելու ահագին բան ուներ:

Ասաց, որ ցերեկները շատ եմ քնում:

Ջոնը գիտի, որ գիշերները ես այդքան էլ լավ չեմ քնում, չնայած իմ այդքան հանգիստ պահվածքին:

Հետո ինձ ամեն տեսակի հարցեր տվեց՝ ձևանալով սիրալի ու հոգատար:

Կարծես չեմ տեսնում, թե մտքին ինչ կա:

Ամենևին չեմ զարմանում, որ այսպես է իրեն պահում՝ երեք ամիս այս պաստառի տակ քնելուց հետո:

Դա միայն ինձ է հետաքրքում, բայց ես վստահ եմ, որ Ջոնն ու Ջեննին դրա գաղտնի ազդեցության տակ են:

Հուռա՛: Այսօր վերջին օրն է, բայց կհասցնեմ: Ջոնը քաղաքում է մնալու գիշերը, ու մինչև երեկո հաստատ չի գա:

Ջեննին ուզում էր հետս նույն սենյակում քնել՝ խորամանկը: Բայց նրան հավատացրի, որ գիշերը ավելի լավ կհանգստանամ, եթե մենակ լինեմ:

Դա խելացի քայլ էր, քանի որ ես ընդհանրապես մենակ չեի: Հենց լուսինը դուրս եկավ, այդ խեղճ արարածը սկսեց սողալ ու նախշը ցնցել: Միանգամից վեր կացա ու վազեցի օգնության:

Ես քաշում էի ու նա ցնցում էր, ես էի ցնցում, ու նա քաշում էր, ու մինչ առավոտ մենք այդ պաստառից մի քանի մետր պոկեցինք:



Գլխիս բարձրության հասնող ու սենյակի ամբողջ երկայնքով ձգվող մի շերտ:

Ու երբ արևը երևաց, ու այդ սարսափելի նախշը սկսեց վրաս ծիծաղել, ես հայտարարեցի, որ այսօր ամբողջը պոկելու եմ:

Մենք վաղն ենք մեկնում, ու իմ կահույքն իջեցնում են ներքև, որպեսզի ամեն ինչ թողնեն ինչպես նախկինում էր:

Ջեննին գարմանքով նայեց պատին, բայց ես ուրախ ասացի, որ այդ չարաբաստիկ ապրանքի հանդեպ ունեցածս դիպից եմ արել:

Նա ծիծաղեց՝ ասելով, որ ինքն էլ դեմ չէր լինի դա անել, բայց ես չպետք է հոգնեմ:

Օ՛, ինչպես ինքն իրեն մատնեց այս անգամ:

Բայց ես այստեղ եմ, ու ո՛չ մի կենդանի էակ ինձնից բացի չի դիպչի այս թղթին:

Նա փորձեց ինձ սենյակից դուրս հանել, դա շա՛տ բացահայտ էր: Բայց ասացի, որ հիմա այստեղ այնքան հանգիստ, դատարկ ու մաքուր է, որ ես կուզենայի պառկել ու որքան հնարավոր է քնել: Ու ընթրիքի ժամին էլ չարթնացնեն ինձ. երբ զարթնեի, ձայն կտայի:

Ու այսպիսով նա գնացել է, ծառայողներն էլ են գնացել, իրերն էլ չկան, ու բացի տեղում գամված մահճակալից ու վրայի ներքնակից, որ գտել էինք այստեղ, ուրիշ ոչինչ չի մնացել:

Այս գիշեր ներքևում պետք է քնենք, ու առավոտյան գնանք:

Սկսում եմ վայելել այս սենյակը. հիմա այն կրկին դատարկ է:

Ինչպե՛ս են այդ երեխաներն այստեղ ամեն ինչ պոկոտել:

Մահճակալի կմախքը բավականին կրծոտված է:

Բայց պետք է գործի անցնեմ:

Դուռը կողպել եմ ու բանալին շարտել դուրս, դեպի դիմացի ուղին:

Ես չեմ ուզում դուրս գալ, ու ոչ էլ ուզում եմ, որ ներս գան, մինչև Ջոնի գալուստը:

Ուզում եմ ապշեցնել նրան:

Այստեղ նույնիսկ պարան ունեմ, որը Ջեննին չի գտել: Եթե այդ կինը փորձի դուրս պրծնել ու փախչել, ես նրան կկապեմ:

Բայց մոռացել էի, որ շատ բարձր տեղերին առանց ինչ-որ բանի վրա կանգնելու չեմ կարողանա հասնել: Այս մահճակալը չի՛ շարժվի:

Փորձեցի բարձրացնել ու հրել այն մինչև ուժասպառ եղաի, ու հետո այնպես բարկացա, որ անկյունից մի փոքր կտոր կծեցի, բայց աստամներս ցավեցրի:

Հետո պոկեցի այն ամբողջ հատվածը, որին գետնին կանգնած հասնում էի: Սարսափելի կաշուն է, ու նախշը դրանից հրճվանքի մեջ է:: Բոլոր այդ խեղդված գլուխներն, ու դուրս պրծած աչքերն, ու ճոճվող բորբոսը հեզանքից ոռնում էին:

Այնքան են բարկանում, որ կարող է դիմեմ հուսահատ քայլի: Պատուհանից դուրս նետվելը սքանչելի վարժություն կլիներ, բայց ճաղերը չափից դուրս ամուր են՝ փորձելն անիմաստ է:

Բացի դրանից ես դա չեի անի: Իհարկե ո՛չ: Գիտեմ, որ այդպիսի քայլն անվայել է ու սխալ կհասկացվի:

Նույնիսկ պատուհանից դուրս նայելն է անդուր, այնքան շատ են այդ սողացող կանայք, ու այնքան արագ են սողում:

Հետաքրքիր է, նրանք բոլորն իմ պես այդ պաստառի՞ց են դուրս եկել:

Բայց ես ապահով կապված եմ իմ լավ թաքցրած պարանով . . . փողոցում սողալիս ինձ հաստա՛տ չեք տեսնի:

Կարծում եմ պետք է այդ նախշի ետևն անցնեմ, երբ գիշերը գա, և դա բարդ է:

Այնքան հաճելի է այս մեծ սենյակում ազատ լինելն ու իմ ուզած ձևով սողալը:

Չե՛մ ուզում դուրս գնալ: Չե՛մ գնալու, նույնիսկ եթե Ջեննին խնդրի:

Դրսում ստիպված պետք է գետնին սողաս, իսկ այնտեղ ամեն ինչ դեղինի փոխարեն կանաչ է:

Բայց այստեղ ես կարող եմ սահուն սողալ հատակի վրայով, և ուսս հավում է ճիշտ այդ մրոտված երկար հետքին, այնպես որ ուղղությունս չկորցնեմ:

Ահա և Ջոնը դռան մոտ:

Անիմաստ է, երիտասարդ, չես կարող բացել:

Ինչպե՛ս է գոռում ու հարվածում:

Հիմա էլ կացնի հետևից ուղարկեց:

Ափսոսք կլինի այս գեղեցիկ դուռը ջարդելը:

- Ջո՛ն, սիրելիս, - ամենանուրբ ձայնովս ասացի, - Բանալին ներքևի մուտքի մոտ է,

այլանտանի տերևի տակ:

Դա մի քանի վայրկյանով նրան լռեցրեց:

Հետո նա ասաց՝ իսկապես շատ հանգիստ ձևով.

-Դուռը բաց, սիրելի՛ս:

-Չե՛մ կարող, - ասացի, - բանալին ներքևի դռան մոտ է, տերևի տակ:

Ու հետո մի քանի անգամ կրկնեցի, շատ հանգիստ ու դանդաղ, ու այնքան հանախ, որ ստիպված եղավ զնայ ու տեսնել, ու իհարկե գտավ, ու ներս մտավ: Հենց մուտքի մոտ կանգ առավ:

-Ի՞նչ է պատահել, - գոռաց, - ի սեր աստծո, ի՞նչ ես անում:

Շարունակեցի նույն ձևով սողալ, բայց ուսիս վրայով նրան նայեցի:

-Վերջապես դո՛ւրս պրծա, - ասացի, - քեզ ու Ջեյնին հակառակ: Ու այդ պատտառն էլ եմ պոկել, որ չկարողանաս ինձ ետ մցնել:

Հիմա ինչո՞ւ պետք է այդ մարդն ուշաթափվեր: Բայց ուշաթափվեց ու հենց պատի մոտ՝ իմ ճանապարհին, այնպես, որ ստիպված էի ամեն անգամ նրա վրայով սողալ:

*Անգլերենից թարգմանեց Աննա Գրիգորյանը*